

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի օգոստոս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 39173.2 մլն դրամ՝ պլանավորված 35850.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 9.3 տոկոսով կամ 3323.2 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.7 տոկոսով կամ 3151.5 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 137 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 24 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 19.2 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 16 ստուգում՝ 17.5 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում հաշվետու ամսում արձանագրվել է վարձու աշխատողների չձևակերպման 4, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման և ապրանքների մնացորդի հայտնաբերման 1-ական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 83 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 55-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 5-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 8-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 15 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել բռնագանձման հայցերով 1 գործ՝ 23373.8 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 65 հայցադիմում՝ 900.0 հազ. դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել է վճարման կարգադրության հայցերով 40 գործ՝ 550.0 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 76 վարչական գործով սահմանվել է 1.2 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7205 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6804:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 43 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում օգոստոս ամսում կատարվել է վերադարձ 72 վարձու աշխատողի՝ 10.7 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 34 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2019թ. հուլիսի 1-ից ներդրված «Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքին համապատասխան նախարարի հրամաններով հաստատվել են «Կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա կենսաթոշակային հաշիվ բացելու մասին հարկային մարմնի կողմից գործատուներին տեղեկացնելու կարգը», «Կենսաթոշակային ֆոնդի փայի սկզբնական անվանական արժեքը», «Մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված)՝ սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու կարգը», «Սոցիալական

վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն սահմանաչափերը չկիրառելու ու սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն սահմանաչափերի կիրառումը վերսկսելու մասին դիմումները հարկային մարմին ներկայացնելու կարգը և դիմումների ձևերը», «Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու մասին դիմումը հարկային մարմին ներկայացնելու կարգը, դիմումի ձևը և կուտակային կենսաթոշակ ստանալու մասին դիմումի վերաբերյալ հարկային մարմնի կողմից գործատուներին տեղեկացնելու կարգը»: Միաժամանակ, գործող մի շարք հարկային հաշվարկների ձևեր համապատասխանեցվել են հուլիսի 1-ից հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում կատարված փոփոխություններին:

Օգոստոսի 21-ին Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը հանդիպում է ունեցել նախարարության ղեկավար անձնակազմի հետ, որի ընթացքում քննարկվել են ֆինանսական քաղաքականությանն ու համակարգի գործունեությանը վերաբերող լայն հարցերի շրջանակ:

Հաշվետու ամսում մեկնարկվել է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կողմից վճարված սոցիալական վճարների և պետության մասնաբաժնի, ինչպես նաև դրանց վերաբերյալ անձնավորված տեղեկատվության՝ մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցման գործընթացը, որի հիման վրա թողարկվել են առաջին կենսաթոշակային փայերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հասարակայնության հետ կապ

Ամենօրյա պարզաբանումներ են տրվել հուլիսի 1-ից հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում կատարված փոփոխությունների և կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակում կատարվող սոցիալական վճարների վերաբերյալ հարկ վճարողների կողմից բարձրացվող հարցերին:

Հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով:

Օգոստոս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 244, ելքագրվել՝ 207 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն: